ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռ. (+374281) 2 25 22**

„19„ „01„ 2022թ **N 01/20/0389-2022**

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր առցանց հարցման, տեղեկացնում եմ.

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը 2021 թվականի ընթացքում ստացել է տեղեկություն ստանալու 28 հարցում: Բոլոր հարցումներն ստացվել են էլեկտրոնային եղանակով:
2. Ութ հարցում ստացվել է e-request հարթակի միջոցով:
3. 2021 թվականին մարզպետարանի ֆեյսբուքյան էջի նամականիում 29 քաղաքացիներ գրառումներ են կատարել իրենց խնդիրների մասին և դրանց լուծման վերաբերյալ խորհրդատվություն խնդրել: Էջը վարողի կողմից յուրաքանչյուր քաղաքացու գրառումը տրամադրվել է մարզպետարանի համապատասխան ստորաբաժանմանը և ստացված պատասխանը ֆեյսբուքյան էջով տրամադրվել նամակագրին:
4. Սոցիալական ցանցերով (ֆեյսբուքով) ստացված հարցումները չեն ներառվում քարտուղարության փաստաթղթաշրջանառության հարցումների ընդհանուր վիճակագրության մեջ, որովհետև դրանք տեղեկություն ստանալու հարցման պահանջներին չեն համապատասխանում: Քաղաքացիների բոլոր գրությունները և նամակները պահպանվում են մարզպետարանի ֆեյսբուքյան էջի նամականիում:
5. 2021 թվականի ընթացքում մերժվել է տեղեկություն տրամադրելու 3 հարցում:
6. Հարցումները մերժվել են հետևյալ հիմքերով.

- Անձնական և ընտանեկան կյանքի մասին տվյալները չհրապարակելու հիմքով՝ 1հարցում,
- ՀՀ անվտանգությունը չվնասելու նպատակով տեղեկությունը չհրապարակելու հիմքով՝ 1 հարցում,
- Տեղեկությունների տնօրինող չլինելու հիմքով՝ 1 հարցում:

7. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջում «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված տեղեկությունների տրամադրման ենթաբաժնի հղումը՝ http://vdzor.mtad.am/TAorenq7/:

1/19/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Ս. Մարգարյան
Տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին
Հեռ 0281 2 40 03